

## ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

### ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԵՒ ՇՈԹՈՌԿԱՆՑ ՏՈՂՄԸ

Եզ.

Տարաբազզարար Ն. Զօւղայի աւետարանի մանրանկարների լուսանկարներն ամբողջութեամբ ձեռքի տակ չունինք այժմ, որ անհրամեցած էր իգնատիոսի՝ յատկապէս պատկերագրական արտևոտի մասին լրիւ գաղափար կազմելու. յոյս ունինք այդ պակասը լրացնել մի այլ առթիւ. բայց ունինք ստացողների՝ Բանաւորի և Տղատիկնոջ պատկերները Մարկոսի հետ մի տախտակով, զունազարդ արտանկարուած հանգուցեալ տաղանդաւոր նկորիչ վարդպէս Սուրէննեանցի ձեռքով, որ պիտի հրատարակենք մեր մանրանկարչական թարատէղի մէջ. Ներկոյ լուսանկարն էլ հանուած է այդ արտանկարութիւնից (պատ. 11) (1):

Այս մի խմբանկարն իսկ բաւական է ցոյց տալ, որ յանձին իգնատիոսի ունինք մի կարսոց մանրանկարիչ Հոռոմոսի և Անիի շրջանից, որ պէտք է իւր արժանաւոր տեղը գրաւէ արեւելեան Հայաստանի մանրանկարչութեան պատմութեան մէջ. առաւել արժէքաւոր է այս մանրանկարը, որ շարլոնական չէ, այլ բնորոշ և անհատական պատկերաւորում ստացողների՝ իրենց հագուստավով և զարդ ու զարդարանքով: Նոյն իսկ աւետարանչի դիմագծերի և արտայայտութեան մէջ սովորականից զուրու արեւելեան զրոշմ և ըմբոնում կայ, որ նշան է իգնատիոսի դիմոզական և ստեղծագործական ունակութեան:

Պատկերի վերելի մասում նստած է Մարկոս (նկ. 11) աւետարանիչը, որ ծընկանը զրել է մագաղաթի թիրթը և գրում է. ևսի/իզբն ա/ւետու: Յետերի ֆոռը մի չէնք է, առաջամասը եռանկիւնի ճակատով, զանով և լուսամուտով. դոնից կախուած և գէպի լուսամուտը ձգուած վարագոյրը ներքին տեսարանն է մատնանը: Աւետարանիչը նստած է բոլորակ,

յած թիկունքով աթոռի և երկար բարձի վերայ, ոտքերի տակ պատուանդան իրեւ մաս աթոռի: Առաջին զրուած է սեղան, կեղրոնում ձողի վերայ հաստատուած զըրակալով, վերան բաց գիրք զրած, որ օրինակն է: Երկու տեսարանը բաժանող գերանի վերայ զրուած է բոլորզբով, զգկարապեան և զ. . . կանն ստացող աւետարանիս | յիշեսչիքս, որ յետին զրութիւն է: Աւետարանիչը լոյն թեսերով տունիկայ է հագել, ձախ ուսի վերայից մոխրագոյն տոգոյ ձգելով. զլուլը թեքել է դէպի ձախ. երեսը ծածկուած բոլորակ և կարճ սկավուքով. կարուած են և սե նտե զլիսի մազերը, աչքերը մաազբազ արտայայտութեամբ և դէմքն արեւելեան զրուածով: Տոգայի փէշով բռնել է մազազաթի թիրթը, ուր զրում է իւր աւետարանը. աջ ձեռքին զրիչ, երեք մատով բռնած, չորրորզը՝ մատանու մատը ծալուծ, իսկ ճըկոյթը թիրթի վերայ՝ պահեստ համար:

Ներքեսի մասում ստացող ամուսինների՝ Բանաւորի և Տղատիկնոջ պատկերներն են, երկուսն էլ չոքած, ձեռքերը աղօթաւորի ձեռվ մեկնած դէպի իրենց նուիրաբերած աւետարանը, որ բազմեցրած է բարձր զրակուլի վերայ, հաստատուած բոլորակ քառասատիճան պատուանդանի և ձողի վերայ: Աւետարանը կազմած է, երեսին խաչ, թեսերը գնդակներով վերջացած: Աջ կոզմից չոքել է այրը, ուսերին վերնազգեստ ձգուծ, նեղ և կախ թեսերով. վերնազգեստն ունի մորթուց օձիք յիտեսի կոզմից: Վերնազգեստի երեսը ծածկուած է խաչաձև կարմիր զարդերով, որ կպած են իւրար և ուղղահայեաց հորիզոնական ուղղութեամբ: Վերնազգեստի տակից հազել է առաջը բաց շուրջայ և ապա կուպայ, կտորով զօտեսրած. Երկու զգեստներն էլ ծաղկաւոր են: Պարանոցի մօտ երեսում է սպիտակ շապիկի օձիքը: Գլուխարկը բոլորածել է, եղերքը ազնիւ մորթուց, իսկ արտաքին երեսը ծաղկաւոր կտորով ծածկուած: Դլիսի մազերը կարճ

(1) Սոյն խմբանկարը հրատարակել է Հացունին իւր Հայ Տարազին նուիրուած աշխատութեան մէջ:



Պատկեր 11

ին և սի , ամբողջական , կարճած մօրուքով  
և թաւ ընչացքով . ոկտոնջներից կախուած  
ին ոսկէ օզիր , բոլորակով վիրջացած . մա-  
տանիմատին մատանի :

Գրատիկի միւս կողմից ծռնկ է չոքիլ  
Տղատիկինը, ձեսքերը զարձեալ աղօթա-  
ւոր մեկնած դէպի աւետարաննը։ Վերից  
վար հաղել է մինչև ուները հասնող սպի-  
տակ ըրջազգեստ, մակերեսոյթը զարդար-  
ուած ուկեղոյն բուսական գարզերով, որ  
ըրջափակուած են ցօղուններից, սեղմած  
և զուգահեռաբար շարուած քառանկիւն-  
ներով։ Թե երին անցրած է թենոց, որ սո-  
վորական էր Մեծ Հայքի կեղրուական  
ասհանքների կանանց համար մինչև վեր-  
ջերս։ Դիլիխն ձգել է սպիտակ կտորից ծած-  
կոց, եզրները գծաղարդ, որ առնուած է  
ճակատին գտնիլ մէջ։ յետեի կողմից սե-  
քող կախուած։ Սպիտակ գծաղարդ լա-  
շուկի տակից, մազերի վերայ ձգուած է  
աւելի նուրբ մի կտոր, որ միայն զազաթի-  
տաաջնամասից է երեւում։ Աչքերն ու-  
ռւնքերը սե են, ոչքերը քիչ շեղակի, որ  
յատուկ է պարսկական յետազայ մանրա-  
նկարչական արտայայտութեան։ Դիլիխ յար-  
գարանքը նման է ներկայ Փամբակի կա-  
նանց, մօտ նուե վրացի կոնանց։ Զալի-  
ձեսքի բթամտի վերայ երես մ է օղակ՝  
մատանի։

Այսպիսով ձեռքի տակ ունինք պատմական - ազգագրական արժեքով մը պատկեր, որ զարտիար է տալիս նախամոնղոլական շրջանի ազնուական դասի հագուստի մասին։ ԺԻ. դարսւ քանդակագործական, մանրանկարչական և որմանկարչական պատկերագրութեան մէջ բաւարար չափով նիւթեր կան, որով կարելի է ժամանակակից այլ և այլ դասերի և ըլքանների հագուստի պէսպիսութիւնները պարզել:

•

Սոյն աւետարանի յիշատակարանից տեսանք, որ Բանաւորը յիշում է որպէս իրեն անուցանաւզ «զբարեպաշտ իշխանաց» իշխանն զպատրոն Դաւիթ Շնթռնինց և զորդիսն իւր զքաջ և զանուանի պատրոնաց պատրոն Գրիգոր և զորդիսն իւր զՄբատ և զԱրքուկն և զԱրգուխա-

թուն»: Իսկ Խճկոնից արձանագրութեան մէջ նոյն Գրիգորին անուանում է օաստուածառէքը պարոն իմաս որի ողորմութեամբ կատարել է իւր նույնիքարերութիւնը. կասկածի ոչ մի առիթ չունինք այս նոյնացման դէմ, թէպէտ արձանագրութեան մէջ չի ասուած, որ այս Գրիգորը Դաւթի որդին է. Երկուսն էլ Խճկոնից վանքի անմիջական տէրերն են, երկուսն էլ Բանառի պատարոնն ու պարոնը:

Այս արտայայտութիւնները հասկանաւ էն համար պէտք է տեղեակ լինել Զաքարիանց շրջանի պետական կազմակերպութիւնն. Երկրի լնդ հանուր տէրերը կամ զերագոյն իշխանները Զաքարէ և Խանէ եղբայրներն էին իրենց սերունդով. Նրանց ննթարկում էին մի շարք իշխաններ, որ ըստ զինու որբական կազմակերպութիւններանց սպարագեանները կոմմ զօրավարներն էին և ըստ վարչականի նրանց ստորագրեանները<sup>(1)</sup>: Արանք էլ իրենց հերթին ունէին աւելի ստորագառ ուպարագեաններ և կալուածատէր իշխաններ, որոնք աշատո էին կոչում: Շոթուկանց իշխանները Զաքարիա մեծի զօրավարներն էին, ինչպէս կը տեսնենք քիչ յիշոյ մէջ բերելիք արձանագրութիւններից, իսկ Բանաւորը Շոթուկանց առն ազատներից, ուստի և իւր պատրոնի կամ պարոնի սողորմանթեամբ է, որ կալուածական նուիրաբերութիւն է անում Խծկոնից վանքին: Այս ոճը կամ արտայայտութիւնը պարունին ննթարկուած ազնուականների կամ աշատոնների նուիրատուութեան ժամանակ, սովորական է Զաքարիանց շրջանի արձանագրութիւնների մէջ, որից միայն մի երկու օրինակ կը բերենք իրեւ ապացոյց թանատի վանքի արձանագրութիւնների մէջ Արմէտն պարունացն ողորմութիւն էաւո, Մամախաթունին իւր հայրենի այդին տալիս է Ս. Ստեփանոսին: Խոթու բէկը Պառշեանների ազատներից՝ «պարունացն ողորմութիւն էաւո» Մամախաթունին զԱղաւակին հոգին» է տայիս նուն վանքին<sup>(2)</sup>:


Տարտարազգաբար մեր ձեռքը հոսած  
աղբիւրները քիչ են, եղածն էլ միայն

(1) *Shu dbp «Խաղբակհանք» bili.* bp. 16-22.  
70-75:

(2) Անդ. 187.

կարճ ժամանակամիջոցի համար, ռաստի և հանգամանօրէն չենք կարող պարզել Շոթուկանց տոհմի ծագման, կատարած դերի մասին մեր պատմութեան և ոչ ճշգիւ որոշել նրանց իշխանութեան սահմանները, դորա հետ էլ ստորագրեալ Բռնաւորի Բայց ամփոփենք, ինչ որ հնարաւոր է եղել հաւաքել:

1210) թուականից, ուր ի միջի այլոց յայտնում է թէ և . . . էտու ի որ ուխտու Հաղբատ(ա)յ իմ հայրենի զեզու որն որ յԱշոցք(?) զՀալալաշէն եւ զվ . . . ( փէ . 4-5 տասի տեղ) եւ զի այս զեղերս հեռի էինի Հաղբատա փոխեցի էտու հայրենալք(?)! Դարթի որդու Շորոկա եւ առի բ. զեղին փոխան զՀազր. (մի կամ երկու տասի տեղ կոտրած, նորոգած



Պատկեր 12

Հաղբատի մեծ ժամատան (Յովհաննէս եպիսկոպոսի շինած, ոչ Յովհաննէս Գ. Դոփեանի, որ ժամանակակից էր Սաթուն աթարէգին և Ամենափրկիչ խոչի կանգնողն էր, այլ նորա նախորդներից մէկը) դրան ճակատին Զաքարիա մհծի, իւանէի եղբօր արձանագրութիւնը կայ ՈՒԹ (=

են) հայրենիք և ընծա որ նշանին Հաղբատա ամենայն սահմանաւոք ոնց բնական լեռն է հողով և ջրով խոտամարգերով . . . » Ան-

(1) «Իմ հայրենի զեզու որն որ յԱշոցք» ժողովրդական բարբառով է. Զալալիսն. Ա. 58: Երզնկեան. Հնախօսական Ցեղազր. Հաղբատայ. Վաղարշապատ. 1886. եր. 27: Գրի ենք առել եւ մենք,

Նոյն Զաքարիան ՈԿԴ (=1214) թուին աղատելով հծկոնից վանքը այլազգիներից, կալուածական նուիրաբերութիւններ է անում առաջնորդութք Դաւթի որդոյ Շոթը լոկայ։ արձանազրութիւնն զանուում է Ս. Սարգսի հարաւային պատին, որ մէջ ենք բերում այստեղ ամբողջութեամբ, նմանահանութեան հետ (պատկ. 12, միջին կամարի վերեկ արձանազր)։

1. + Կամաւն այ։ +
2. : Ի ՈԿԴ։ թվարերութեանս
3. Հայոց եւ Զաքարէ ամիր սպ
4. ասաւար Հայոց և Վարոց որդի Սար
5. զսի աղատեցի զսր ուխտս զայս իմս
6. զ արեամբս ի յայլազգեց եւ ետու ի սր Սար
7. զիս զվասակափող Մշկազրիւր . . .
8. եւ այզի մի ի Բազրան եւ շինուկան մին ի գ
9. իւսո յիշատակ հոգոյ իմոյ եւ յարեւատ
10. ութի հարազատ որդոյ իմոյ Շահանշահի
11. եւ եղբաւը իմոյ իւանէի հայր Յովհաննէս եւ ա
12. յլ միարանքս հաստատեցին զսր Սարգսի
13. զաւագ բեմբն անխափան պատարագ առնել ինձ առաջ (միացած)
14. նորդութք Դաւթի որդոյ Շոթը լոկայ արդ եթէ յիմ
15. ազգականաց եւ կամ յաւտարաց եւ կամ հարանց
16. զիմ զիշատակս խափանէ եւ զվասակափաւզ յ
17. այս օրբոցս հանէ։ զաւծին։ զկահնին։ զմուգային։
18. զխաչահանուաց զանէծոն առցէ։ յժը։ իցն ի սր
19. երբորդութենէն մի զացէ ողորմութի։ ամէն։

Այս երկու արձանազրութիւններից երեսում է, որ Դաւթի Շոթուկանցի իշխանութիւնը և կալուածները պէտք է մասամբ Հազբատի և մասամբ հծկոնից վանքի կամ Տեկորի շրջանում լինէր. աւելացնենք, որ Բանաւորի նուիրաբերութիւնները աւետարանով և այգուով որպ ի Մըրեն» այդ են մատնահանում։ Բայց մենք ունինք ուրիշ տպացոյց ես. Սանահնի վանքում ածեմարան» կոչուած ընդարձակ սրահի հարաւային պատին, ուր գէափի մնձ տաճարի դաւթը տանող զուռն է, զանուում է նոյն Դաւթի իշխանի, Շոթուկա որդու մնձ ար-

ձանազրութիւնը, որ նոր լոյս է սփռում խնդրի վերաց. նա յայտնում է, որ ՈՀԸ. (=1222) թուին գնել է «զմունակ զոմուց կէան եւ շինուկան մի Հալալաշինի . . . ան: Այստեղ յիշուած Ռոնակ գիւղը այժմ էլ նոյն անունով գտնուում է Հազբատի և Սանահնի մէջ, հին եկեղեցու մնացորդներով, և եթէ «Հազբը» անունը Զաքարիայի արձանազրութեան մէջ «Հազբատ» պիտի կարդալ, նշանակում է Դաւթը տեղական իշխան էր Հազբատի և Սանահնի մէջ ընկած մի երկրամասի։ Հազբատի մնձ իշխանները Մահկանաքրդի Արծրունիք էին, որոնց յայտնի ներկայացուցիչներ են Ամիր Քուրդ, Սաթուն աթարէդ են, որոնց տոնմը կարենը զեր է կատարում Հայոց և Վրաց պատմութեան մէջ ժբ. դարու կէսերից մինչև ժդ. ի վերջերը։

1. + թու ՈՀԸ. ես Դաւթիթ իշխան որդի Շոթուկա է (?) գնեցի զմունակ
2. զոմուց կէսն և շինական մի Հալալաշինի մշակն լմնած
3. ուխ եւ զսպիտակ(1) նշան և բ։ շուրջառ ընծաւեցի յած
4. ածինակ առաջնորդ սր ուխտիս տր Յոհաննիս և մի ար ան ք սկ տուն
5. զսր Գրիգորի տանն որ հետեւ դիական զշարաթն եւ զիկիրակէն զեկեղե
6. ցիքս զշարաթնար նինձ Դաւթի եւ Վարճկո եւ զիկիրակ
7. է աւրեն Սար զ սի եւ Շերբարքին արդ որ զմեր ընծայս հանէ յ
8. այ սկ կեղեցոյս Յուղաի և Կաէնի մասնակից է զի եւ
9. մեր մեղացս տէր է առաջի քի աւին։

Այստեղ յիշուած անուններից Շերբարքի կը անուննք կրկնուած նոյն Դաւթի հծկոնից վանքում թողած մի արձանազրութեան մէջ, իսկ Վարճիկն ու Սարգիսը անյատ են, բայց անպայման իւր մերձաւունները։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՈ. ՅՈՎՈՒԿԻԿԱՆ  
(Ծար.)

(1) Երկրորդ տողի վերջին եւ երրորդի առաջին բառերը պարզ չեն եւ միտք չի դուրս զալիս. արդիօք «զսպիտակ» «զ. սպիտակ» պիտի կարդալ. շատ չշմին զումար կը լինի այդ զէպրում մի իշխանի կողմից նուիրելու. «զսպիտակ նշան» պիտի է արձաթի խաչ հասկանակ, Զալալ, և. 19 չի կարդացել.